## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
## ԵՂՎԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Եղվարդ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Եղվարդ, (0224) 2-11-10, yeghvard.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՀՈՒՆԻՍԻ 2018թվականի N 551

### ՎԱՐԴԱՆ ՄՈՒՐԱԴԽԱՆՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԵՂՎԱՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Ազդարարման համակարգի մասին>> օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 15-ի N 272-Ն որոշման N 1 հավելվածի 1-ին կետը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Եղվարդի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Վարդան Մուրադխանյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Եղվարդի համայնքապետարանի ազդարարման համար պատասխանատու անձ:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Եղվարդի համայնքապետարանի ազդարարման համար պատասխանատու անձին՝ ապահովել Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 15-ի <<Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և ձևակերպման օրինակելի ձևը, ինչպես նաև ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման ընթացակարգը սահմանելու մասին>> N 272-Ն որոշմամբ սահմանված լիազորությունների իրականացումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ**

2018թ. հունիսի 27

ք. Եղվարդ